№ 126 Յուլիսի 22 (Օգոստոսի 3) 1880 Յուլիսի 22 (Օգոստոսի 3) № 126

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և ոչն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր ասածը կատարվեցաւ։—Ներքին տեսութիւն։ Նամակ Բագուից։ Նամակ Ալէքսանդրապոլից։ Նամակ Վլադիկավկասից։ Նամակ Ղարսից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Կ. Պոլսի մէջ պատահած վերջին անցքերը։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Հայոց ուսումնարանների նախագիծ։

ՄԵՐ ԱՍԱԾԸ ԿԱՏԱՐՎԵՑԱՒ

—

Կ. Պոլսի Հայ Ժողովուրդը, ինչպէս հաղորդում է ռուսաց «Голосъ» լրագրի թղթակիցը, երեւում է թէ հասկացաւ որ Թիւրքաց արտաքին գործերի մինիստրի նոր օգնական, Դադեան Յարութիւն բէյը դաւաճանել է իր ազգի գործին, յօրինելով Բ. Դերան կողմից մի պատասխան եւրոպական պետութիւններին, որի մէջ հաւատացնում է որ ամբողջ Հայաստանում հայերը միայն 17% են կազմում մահմեդական ազգաբնակութենից։

Ընթերցողի ուշադրութիւն ենք դարձնում մեր ներկայ համարի արտաքին տեսութեան մէջ տպված «Голосъ» լրագրի թղթակցութեան վրա։

Մեր ասածը կատարվեցաւ, ուրեմն։ Այժմ պարզ է որ Դադեան մուստէշար նշանակվեցաւ Բ. Դերան ձեռքով իսկ այն ժամանակ, երբ հարկաւոր էր պատասխանել Եւրոպային հայոց խնդրի մասին։ Մենք աւելի կասենք. Դադեան նշանակվեցաւ նոյն իսկ այն նպատակով, որ Թիւրքիային սպառնող հայոց խնդրին մահվան հարուած տրվի.... Բ. Դուռը շատ լաւ գիտէ որ հայերին, հայոց գործին, հայութեանը վնասելու ամենահեշտ միջոցն է նոյն իսկ հայերի, մանաւանդ հայ աղաների ձեռքով գործելը.... Հայերի դաւաճանը միշտ հայը կը լինի։

Բայց երեւում է թէ Կ. Պոլսի հայ ինտելիգէնցիան վերջին ժամանակները բաւական առաջադիմութիւն արաւ. թէև մի կողմից կան դեռ ևս Դադեանի պէս դաւաճաններ հայերի մէջ, բայց ուրիշ կողմից հայ ազգի մեծամասնութիւնը այնքան զարգացաւ բարոյապէս և մտաւորապէս, այնքան զարգացաւ նրա մէջ ազգային ինքնաճանաչութիւնը, որ ազգը, իր հասկացողների բերանով, սկսում է պատժել իր դաւաճաններին։

Ռուսաց լրագրի թղթակիցը հաղորդում է որ այս օրերս Կ. Պոլսի երիտասարդութիւնը հաւաքվեց Դադեանի պալատի առջև և ազգային երգեր երգելով, ընդհատում էր իր երգեցողութիւնը անդադար աղաղակելով «կո՞րչի դաւաճանը, կորչի հայրենիքի թշնամին։»

Դադեան-բէյը այնքան վախեցաւ այդ թշնամական ցոյցերից և ժողովրդի արդար բարկութիւնից որ միւս օրը շտապեց Ներսէս պատրիարքի մօտ, հաւատացնելով նրան որ ինքն մասնակից չէ եղել հայոց խնդրի վերաբերութեամբ եւրոպական պետութիւններին Բ. Դերան կողմից տուած պատասխանի յօրինելու մէջ։

Միայն ժողովրդական այդ տեսակ ցոյցեր, հայերի այդ տեսակ ազգային ինքնաճանաչութիւն կարող է պատժել հայոց ազգի միջից յայտնվող դաւաճաններին, կարող է ապագայում առաջն առնել նրանց երեւալուն....

Թող ուրիշները, որոնց համար ազգը դաւաճանելը սովորական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԻ ՆԱԽԱԳԻԾ

—

Հայոց ազգային երկսեռ ուսումնարանների կազմակերպութեան նախագծի վրա մինչև այժմ բաւական կարծիքներ յայտնված է և արծարծած են մեր պարբերական թերթերի միջոցով մի կողմից, և ուսուցչաց ու ժողովրդականաց միւս կողմից։ Նոյն հարցի վերաբերմամբ այժմ էլ արծարծվում են զանազան կարծիքներ իր ուսումնարանների վիճակին և որդիների դաստիարակութեան հետամուտ ժողովրդի ամեն դասակարգի մէջ բայց դժբախտաբար այս ազգային կենաց և մահու հարցը ու բոլոր ապագայի խնդիրը մինչև այժմ էլ մնաց առանց վճռվելու և մի նպատակայարմար ու ժամանակիս պահանջներին համաձայն որոշման հասնելու։ Ուստի մեր ուսումնարանները չարունակում են այժմ էլ ընթանալ նոյն հին ուղղութեամբ, հեռանալով ժամանակիս պահանջած իսկական նպատակից։

Մեր ուսումնարանների հարցով այսչափ ժամանակ զբաղվելը և մի որոշ եզրակացութեան չը հասնելը, ըստ մեր դատման, գլխաւորապէս առաջ է գալիս այն սխալ ձեից, որին հետևում են շատերը կարծես միանգամայն՞ակամայից։ Այս երևոյթը առաջ է գալիս նորանից, որ շատերը մեզանում չեն աշխատում հետևողաբար զննել մինչև վերջը ընդհանուր և մասնաւոր հարցերը, ջոկել նոցա գլխաւոր մասերը երկրորդականներից և ի վերջոյ գտնել նպատակայարմար և ժամանակիս պահանջած միջոցներ։

Մինչդեռ մեր ազգային բոլոր հոգևոր ուսումնարանները այժմ և եթէ կարօտ են այնչափ շուտափոյթ վերանորոգութեան, որ նորա վերջնական լուծումը յետաձգելը, ինչ պատճառից էլ նա առաջ գայ, էլ՞անհնարին է։

Հայոց ազգը, մանաւանդ վերջի ժամանակները, առանց հիմնովին կանոնաւորելու ուսումնարանաց տնտեսական և ուսումնական մասերը, սկսեց այնչափ տաքանալ ուսումնարաններ բանալու վրա, որ գրեթէ օր չէ անցնում որ չը լսենք կամ չը կարդանք լրագրներում այս ինչ կամ այն ինչ տեղ բացված նոր ուսումնարանի մասին։

Մեր հոգևոր ազգային ուսումնարանների դրութիւնը բաղկանում է երկու էական մասերից՝ տնտեսական և ուսումնական։ Տնտեսական դրութեան վերաբերմամբ մեր ուսումնարանները կարելի է բաժանել մօտաւորապէս հետեւեալ վեց կարգի։

Այն ուսումնարանները, որոնց նիւթական ապահովութիւնը կազմում են հայ ժողովրդականաց հանգանակած և կտակած դրամական գումարները, որոնք տրուած են ի շահեցողութիւն պետական և մասնաւոր բանկերի մէջ, կամ մասնաւոր ապահով համարված անձինքներին։ Ահա այս դրամական գումարներից ստացված բոլոր տոկոսներով մատակարարվում է հոդաբարձուաց ձեռքը մեր ուսումնարաններից շատերի տնտեսական մասը։

Ազգային հոգևոր ուսումնարաններից շատերն էլ ունեն անշարժ սեպհական կայքեր, որոնք մասամբ բարերարների կողմից ընծայված են և մասամբ էլ ժողովրդականաց մէջ հանգանակած դրամական գումարներով գնված։ Այս անշարժ կայքերից ստացված բոլոր եկամուտներով կառավարվում են մեր ուսումնարաններից շատերը, դարձեալ հոդաբարձուաց ձեռքը։

Մի քանի ազգային հոգևոր ուսումնարաններ էլ կան, որոնց տնտեսական մատակարարութիւնը մի կամ աւելի բարերար հիմնադիրների է վերաբերում, որոնց անունով ուսումնարանները յայտնի են։ Այս տեսակ բարերար հիմնադիրների անունը կրող ուսումնարանները ապահովված կը համարվեն նոյն իսկ հիմնադիրների ինչպէս կենդանութեան նոյնպէս և մահից վերջը կտակած դրամական գումարներից և անշարժ կայքերից ստացված բոլոր եկամուտներով։

Շատ ուսումնարանների էլ տնտեսական մասը մատակարարվում է, թոյլատրութեամբ հոգևոր բարձրագոյն իշխանութեան, եկեղեցեաց մոմի և կամ ուրիշ արդիւնքներից ստացված դրամական գումարներով և կամ եկեղեցական անշարժ կայքերից կազմված այլ և այլ արդիւնքներով նոյնպէս հոդաբարձուաց ձեռքը։

Վանական ուսումնարաններ, որոնց տնտեսական մասը հոգացվում է ուխտաւորաց և վանական անշարժ կայքերից ստացված եկամուտներով։ Այս տեսակ ուսումնարանաց տնտեսական մատակարարութիւնը, առանց մի որ և է պատասխանատուութեան և հաշիւ տալու ազգին, լինում է մեր հոգևոր բարձրագոյն իշխանութեան ձեռքը։

Եւ ի վերջոյ կան շատ-ուսումնարաններ, որոնց նիւթական ապահովութիւնը կայանում է հայ ժողովրդականաց զանազան կամաւոր տուրքերում, որոնց մատակարարութիւնը լինում է հոդաբարձուների կամ մասնաւոր անձերի ձեռքը։

Վերոգրեալ վեց կարգի բաժանված ուսումնարանները պարունակում են իրանց մէջ բոլոր մեր երկսեռ ծիսական, միջնակարգ ուսումնարանները բարձր համարված թեմական դպրոցները և վանական ուսումնարանները՝ ինչպէս Գէորգեան ճեմարանը և ուրիշները։ Ըստ մեր դատման սոցանից ոչ մինը չէ կարող յառաջադիմական կերպով նիւթապէս բոլորովին ապահովված համարվել, մանաւանդ անոնք, որոնց տնտեսական մասը կախում ունի գլխաւորապէս մեր եկեղեցիներից և մասնաւոր անձերից։ Պարզենք ասածներս։

Յայտնի է, որ շատ անգամ ուսումնարանի մի սեպհական շինութիւնը հարկաւոր կը լինի մեծացնել, վերանորոգել, վերահիմնել և կամ ի վերջոյ նորը դնել։ Այս դէպքերը կարող են անհրաժեշտ լինել, երբ ուսանողաց թիւը հետզհետէ բազմանում է այնչափ, որ ուսումնարանի շինութիւնը փոքր է գալիս, ուսումնարանի սեպհական տունը քայքայված է և կամ երբ դպրոցի համար յարմար տուն չը կայ, այնպէս որ հարկաւոր կը լինի նոր տեղ գնել և նոր շինութիւն կանգնացնել։ Այս նշանաւոր դէպքերում ուսումնարանի տնտեսական մասը կառավարող անձինք որ աղբիւրի պէտք է դիմեն, որպէս զի կարողանան չուտափոյթ ձեռք բերել այն գումարը, որով կարելի լինէր ուսումնարանի անհրաժեշտ պահանջները լրացնել։ Ո՞ր աղբիւրի, կրկնում ենք, քանի որ այդ տեսակ դէպքերի համար առաջուց պատրաստած և նշանակած դրամական գումարներ չը կան... Ժողովրդականաց մէջ հանգանակութիւններ անելով... Հարուստ վաճառականի ոտքն ընկնելով... թէ հոգևոր բարձրագոյն իշխանութեանը դիմելով... Ըստ մեր կարծեաց այս տեսակ միջոցներով ուսումնարանի անհրաժեշտ պահանջը իր ժամանակին հաղիւ կարող կը լինենք հոգալ. և եթէ ենթադրենք՝ մի որ և իցէ կերպով յաջողվեցաւ մեզ հասնել նպատակներիս, գտնել հարկաւոր դրամական գումար մի, այն ատեն էլ բանը բանից անցած կը լինի... ուսումնարանի գոյութիւնը ի վաղուց վերջացած կը լինի... Ուրեմն, ըստ մեր դատման, կը մնայ մի միջոց՝ ուսումնարանի դրամագլխի մի մասը բանկերից կամ մասնաւոր անձերից առնուլ և կամ անշարժ կայքերի մի կտորը վաճառել։ Իսկ եթէ յիշեալ դրամագլուխը և անշարժ կայքերը բարերարների կողմանէ կտակված են և կտակի զօրութիւնով չէ կարելի դիպչել ոչ դրամագլխին և ոչ էլ անշարժ կայքերին, այն ատեն ուրեմն ինչպէս վարվել այսպիսի դէպքում։

Նոյն տեսակ դժուարութիւններին կարող են ուսումնարանները հանդիպել, երբ հարկաւոր կը լինի մի քանի յառաջադիմական փոփոխութիւններ մտցնել սոցա ուսումնական մասի մէջ, երբ հարկաւոր կը լինեն ուսումնական պիտոյքներ բերել տալ, կամ երբ պէտք կը լինի գտնել աւելի հմուտ և փորձառու տեսուչներ և ուսուցիչներ։

Եթէ ուսումնարանների տնտեսական մասը գլխաւորապէս կախում ունի եկեղեցեաց արդիւնքներից կամ թէ ուսումնարանը լոկ վանական է, այն ատեն աւելի ևս մեծ դժուարութիւնների կը հանդիպենք, որովհետև յիշեալ արդիւնքների անպատասխանատու տէրն է մեր բարձրագոյն հոգևոր իշխանութիւնը, որի սեպհական շահերը շատ անգամ ազգային թէ ընդհանուր և թէ մասնաւոր շահերի հետ չեն կարող հաշվել և զուգընթաց գնալ... Այստեղ էլ, ուրեմն հանդիպում ենք նոյն խոչընդոտներին։

Իսկ ինչ կը վերաբերի ժողովրդականաց կամաւոր տուրքերով կառավարվող կամ մասնաւոր անձինքներից բացված ուսումնարաններին, հասկանալի է, որ այսպիսիների նիւթական պայմանները այնչափ աննախանձելի են, որ չեն ներում մի յառաջադիմական փոփոխութիւն անել ոչ միայն ուսումնարանի գլխաւոր պահանջների վերաբերմամբ, այլ ևս ամենաերկրորդական բարելաւութեան նկատմամբ։

Վերը ասածներից երևում է, որ մեր ազգային հոգևոր ուսումնարանները չունեն այնքան հաստատ և յարատև նիւթական աղբիւրներ, որոնցով կա-

ԴԱՎԱՆՈՒԹԻՒՆ ԴԱԺԱՌԴ

Ե. Ն.

Ամառն դատն քարատ։

Երկնի վեհատ զվարդեալ, զոչատ-
ուն զգոյնս տալ Հոգմուն մէկ դում

Ամառն դատն քարատ։ Ամառն դատն քարատ։ Ամառն դատն քարատ։

պեցի ես այս բոպէիս։ Մաքսատանից վերադառնալով տուն ու անցնելով մի խրճթի առաջից (համարեայ անբնակ փողոցում), ականջներիս դիպան աղաղակներ լի հառաչանքներով.—վայ.... վայ.... Մայ ներս խրճիթը և ինչ.... սառը, նամ դեանի վրա, մթի մէջ տեսայ վեր ընկած մարդկանց դիակներ, մի երկու կանայք էլ նստած՝ բոլորները գլխները քաշ արած լալիս են. մէկը կարծես քնի մէջ երազում էր գոչելով, ախ իմ տուն, ախ իմ սիրիւկ (ոչխարների երամ)։ Մօտեցայ կնոջը և հարցրի՝ ով է։ Դիակները կարծես ոգի առան, վեր թռան տեղերից և հառաչեցին հաց, հաց։ Մարդս պէտք է շատ սարսափելի պինդ ցղեր ունենայ, որ կարողանայ դիմանալ այսպիսի տեսարանի։

Այդ խղճուկները քրիստոնեայք են Վանի կողմերից, հազիւ հաղ հասել են Ղարս, ուր ալէքսանդրապոլցի մի դերձակ տեղաւորում է նրանց տաճիկներից գնած իր մի խրճթի մէջ. իսկ ինչով են ապրում, դա մի գաղտնիք է. միայն ես տեսայ հալ ու մաշ եղած դիակներ։ Անցեալները դրանցից կը մահանայ մի երեխայ 10 տարեկան, մեռեալին վերցնող անգամ չէ լինում, իսկ քահանան մեծ դժուարութեամբ համաձայնում է կատարել իր պարտականութիւնը։ Վերջապէս յիշեալ դերձակը համոզում է քահանային և մի կերպ հընարը գտնում է հասցնել մեռելը գերեզմանատունը։ Զարմանալի է թէ ինչպէս այդ քահանան համբերում է և մինչև այժմ հրապարակօրէն չէ յայտնում Ղարսի բնակիչներին այն քամբաղտների մասին, թէև պէտք է ուղիղն ասած, որ Ղարսի աղաների և հաջի աղաների համար աշխարհումս չը կայ ազգային ինդիր.—նրանք միայն ուտում, խըմում, ծխում ու քնում են. գոնեա կը լսէին օտարաքաղաքացիք, որոնց թիւը այստեղ շատ է և որոնք գիտեն սիրել իրանց եղբարցը։

Հրաւիրում եմ գաղթականաց համար ժողովարարութիւն հաւաքող մասնաժողովի ուշադրութիւնը վերը յիշած խրճթի վրա։—Կարծեմ, որ մասնաժողովը կունենայ միջոց շուտափոյթ օգնութիւն հասցնել առհասարակ բոլոր տեղւոյս գաղթականներին, որոց թիւը օրից օր շատանում է այնպէս, որ չէ կարելի անել տասը քայլ, որ մարդ չը հանդիպի մուրացկանի։ Արդեօք Ղարսի պոլիցիային յայտնի չեն այն խրճիթները, ուր զետեղված են հիւանդ, կիսամեռ քաղցածները. չէ որ այդ խրճիթները կարող են դառնալ տարափոխիկ հիւանդութիւնների (էպիդեմիայի) բներ։

Ռուբէն Մելիք-Ադամեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 28 ապրիլի

Աչքի առաջ ունենալով սովի դառն հանգամանքները և նրա թշուառ հետևանքները՝ մի քանի երիտասարդներ դիտաւորութիւն ունէինք տալ մի ներկայացում յօգուտ վասպ. սովատանջ մեր այդ թշուառացած ազգայիններին, բաղկացած հետեւեալ երեք վոդեվիլներից՝ «Սեի տեղ սպիտակ», «Աներեւոյթ գլխարկ» և «Պեպօի տիճուր», բայց երբ թատրօնը եղաւ պատճառ մեր այդ մտադրութիւնը անկատար թողնելուն, որոշեցինք այս ասն օրերին ստորագրութիւն բանալ և փող ժողովել նոյն նպատակով։

Առաջին անգամ Զատիկ կիրակի օրը, ճաշից յետոյ, Նորաշէն եկեղեցու տօնին՝ դիմեցինք այդտեղ։ Գաւթում եկեղեցու դրան մօտ դրեցինք սեղան և ձեռնարկեցինք մեր նպատակին, առաջուց յայտնելով այս մասին նոյն եկեղեցու Տէր Ստեփան քահանային, բայց երեսփոխան պ. Ստեփանեանցը, որ մինչև այդ ժամանակ ներկայ չէր, դիմեց մեզ անքաղաքավարի ձեով հետեւեալ խօսքերով. «ով է զուք և ինչ իրաւունքով է ժողովարարութիւն անում։» Մեր ով լինելը և ինչ իրաւունք ունենալը նրան բացատրվեց, բայց նա առանց ուշադրութիւն դարձնելու մեր խօսքերին, հրամայեց կոպտութեամբ եկեղեցու ծառայողներին, արգելել մեզ ստորագրութիւնը սկսել և շարունակել։ Ի զուր անցան մեր մի քանի խօսքերը. նա չը կարողացաւ հասկանալ նրանց, նրան անմատչելի էին քաղաքավարի խօսքերը։ Այնուհետև մտածելով, որ անքաղաքավարութեանը նոյն ձեով պատասխանել մեր կողմից ստորութիւն կը լինէր և գուցէ թէ վատ հետևանքներ առաջանային դրանով, ակամայ հեռացանք՝ առանց կոպէկ ժողովելու, պատկերացնելով մեր առաջ Թիֆլիսի երեսփոխանների և առհասարակ Թիֆլիսի մի դասի բնաւորութեան ճիշտ պատկերը.—ինքը չէ կամենում մարդասիրութիւն, բարութիւն անել, ուրիշներին էլ արգելում է նոյնը անել։

Մենք այդ անաջողութիւնից չը վհատվելով, հետեւեալ մեռելոցքի երկուշաբթի օրը առաւօտեան դիմեցինք Խօջիվանքի հանգստարանը, որտեղ ունեցանք յաջողութիւն և կարողացանք ժողովել հարիւր քսան և վեց րուբլ և յիսուն և երեք կոպէկ (126—53)։ Աւելորդ չէ յիշել, որ այդ ժամանակ արժանացանք և մի քանի վայր ի վերոյ զրպարտող խօսքերի, շատերը կրկնեցին ճիվքեր են սրանք և ինչ իրաւունքով փող են ժողովում, —բայց մենք մեր նպատակը աչքի առաջ ունենալով անուշադիր թողնելով նրանց անտեղի խօսքերը, մեր ձեռնարկութիւնը առաջ տարանք։—Կարմիր կիրակի օրը, ճաշից յետոյ, Վանքի դաւթում կարողացանք նոյնպէս ժողովել տասն և մի րուբլ և վաթսուն կոպէկ (11—60)—որ միացնելով՝ ընդամենը կը լինի 138—13 կոպ։ Հարիւր և քսան րուբլի արդէն ստացած ունէք, բարեհաճեցէք ստանալ մնացած 18 րուբլի և 13 կոպ. և ուղարկել ուր հարկն է. խնդրում ենք այլ և բարեհաճէք տեղ տալ ձեր լրագրի մի անկիւնում ստորագրվողների անունները և ազգանունները տպվելուն, որ ընդամեն ուղարկում ենք խմբագրութեանդ։

Սմբատ Հովուեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Յուլիսի 19-ին ԹԻՖԼԻՍԻ առաւ «Обзоръ» լրագիրը դադարել է հրատարակվելուց։ Լրագրի խմբագրութիւնը յայտնել է յայտարարութեամբ իր բաժանորդներին, որ կովկասեան ցէնզուրական կոմիտէը պահանջում է որ այսուհետև «Обзоръ» լրագրի թերթերը ենթարկվեն կրկնակի ցէնզուրային, այսինքն, որ բացի ցէնզուրայի թոյլատրութենից, իւրաքանչիւր թերթ հրատարակվելու իրաւունք ստանայ տոմսակով, ինչպէս գրքերը և բրոշիւրները։ Խմբագրութիւնը յայտնում է որ այդ պայմաններով նա անկարող է հրատարակել իր թերթը։

—

Յուլիս ամսի սաստիկ չոքերից յետոյ, վերջապէս եկան երկու երեք մեծ անձրևներ ԹԻՖԼԻՍՈՒՄ և սաստիկ հովացրին եղանակը։

—

Մի գաւառական քաղաքի հայ քահանայ պսակի խորհուրդը կատարելու ժամանակ աւելացնում է հետևեալ խօսքերը. «Այսուհետև դուք երկու մարմին չէք, այլ կազմում էք մի մարմին և մի անձնաւորութիւն և որովհետև Աստուած ձեզ մրացրեց, ելՀոչք ձեզ չէ կարող բաժանել։» Այս խօսքերից յետոյ քահանան սովորութեան համեմատ սկսում է հանդիսականներից փող հաւաքել։ Երբ մօտենում է նորապսակներին, փեսան տալիս է 5 րուբլ։ Տէր-հայրը գանձանակաթասը մօտեցնում է և հարսին։ Այդ միջոցին փեսան նկատում է նրան. «մենք արդէն տուեցինք, դուք ինքներդ ասեցիք որ մենք մի մարմին և մի անձնաւորութիւն ենք կազմում։»—«Ոչ, ոչ պատասխանում է քահանան տեսնելով որ իր շահերը վնասվում են ես ղալաթ եմ արել, այդպիսի խօսք չեմ ասել...»

—

ԵՐԵՒԱՆԻ թեմական դպրանոցի տեսուչ, պ. Բէգնազարեանց խնդրում է մեզ տպել հետեւեալ յայտարարութիւնը։ «Երևանի ազգային հոգևոր դպրանոցին հարկաւոր է ռուս լեզուի համար մի ուսուցիչ, սեպտեմբերի ամսից։ Շաբաթական 26 դասին կը ստանայ 1000 րուբլ տարեկան ռոճիկ։ Ցանկացողները պէտք է գոնէ մի արքունի միջնակարգ դպրոցում աւարտած լինեն իրանց ուսումը և ծանօթ լինեն հայոց լեզուին ևս։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻ ՄԷՋ ՊԱՏԱՀԱԾ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

—

«Голосъ» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը հաղորդում է հետևեալ հետաքրքիր տեղեկութիւնները։

Զը նայելով որ Բ. Դուռը շատ վարպետ է եղել միշտ դժուար դրութիւնից դուրս գալու համար, այս անգամ, երևում է, նա պարտաւորված կը լինի ճանաչել իր թուլութիւնը և խոնարհվել Եւրոպական մեծ պետութիւնների միահոգի պահանջների առջև։ Թիւրքիան կարծում է փախչել իրան սպառնող վիճակից և ազատվել Եւրոպայի կամքին հպատակվելուց երբեմն սպառնալով Եւրոպային ընդհանուր մահմեդական յեղափոխութեամբ, երբեմն երևակայական հրամաններ տալով զօրքերը պատրաստելու, երբեմն յուսալով որ Եւրոպական ներդաշնակութիւնը կը քանդվի։ Բայց այժմ երեք շաբաթվայ ժամանակամիջոցը, որ նրան տուած է Եւրոպային պատասխանելու համար Դամոկլէսի սրի պէս կախված է Եալդիզի—կեօշկի կիսալուսնի վրա, որտեղ ամեն օր հաւաքվում են ընդհանուր խորհրդի Աբդուլ-Համիդի ամենաերևելի աստրօլօգները, որպէս զի մարգարէական՝ արդեօք գալու չէ՞ երկնքից մարգարէի աներևոյթ հրեշտակը, այն պատուհասին առաջն առնելու համար, որ մեծ իմամի գլխին պէտք է հասնի։ Եթէ աստրօլօգները ոչինչ միստիկական չեն գտնի և իրանց աղօթքներով չեն կարողանայ սարսափեցնել սպառնացող գեաուրներին, խաւարեցնելով նրանց միտքը և երկպառակութիւն գցելով նրանց մէջ, այն ժամանակ, անկասկած, սուլթան Աբդուլ-Համիդ, ֆատալիստի կատարեալ խոնարհութեամբ կը հրամայի իր բաշվէկիլին գրել, որ Թիւրքիան միշտ համաձայն էր ձգդութեամբ կատարել Եւրոպայի խորհրդները երեք կէտերի վերաբերութեամբ, որոնք յիշված են պետութիւնների համաձայն գրութեան մէջ։ Այդպէս է այստեղ ընդհանուր կարծիքը այն ողբերգա-կատակերկութեան մասին, որ երկրորդ տարի է արդէն խաղացվում է Թիւրքիայում։

Փոքր ի շատէ գրաւելու և հանգստացնելու, ինչպէս ասում են Թիւրքերը ամօթը կորցրած քրիստոնեաներին, մանաւանդ հայերին, Բ. Դուռը յանձնեց նորերում մեծանուն հայ Դադեան Ցարութիւն-բէյին արտաքին գործերի մինիստրի օգնականի պաշտօնը։ Բայց յօնքը շինելու տեղ, Բ. Դուռը աչքն էլ հանեց. Ցարութիւն Դադեանի նշանակելը աւելի կատաղեցրեց հայերին, որոնք Ստամբոլի ազգաբնակութեան երկու երրորդական մասն են կազմում։ Նրանք վրդովված են, որ Դադեան կանչված է այդ տեսակ բարձր պաշտօնի, նոյն իսկ այն ժամանակ, երբ այդ պաշտօնը վարող պաշտօնեան պէտք է գրեր Բ. Դրան կողմից խուսափվող պատասխանը հայոց խնդրի վերաբերութեամբ։ Այս օրերս Դադեանի պալատի առջև հայոց երիտասարդութիւնը կատարեց սաստիկ թշնամական ցոյցեր։ Երգելով ազգային երգեր պալատի պատուհանների առջև, երիտասարդները ընդհատում էին իրանց երգեցողութիւնը աղմկալի աղաղակներով «կորչի դաւաճանը, կորչի հայրենիքի թշնամին։» Ասում են, որ միւս օրը Դադեան շտապեց գնալ Ներսէս պատրիարքի մօտ, աշխատելով երդմամբ հաւատացնել նրան, որ հայոց խնդրի վերաբերութեամբ Բ. Դրան պատասխանը գրված էր առանց իր տեղեկութեան և նախ քան թէ ինքն ընդունած էր մուստեշարի պաշտօնը։

Անգլիայի ազատամիտ ներկայացուցիչ պ. Գոշէն, երբ եկաւ Կ. Պօլիս, մեծ համակրութիւն էր ցոյց տալիս դէպի հայոց ազգի գործը, բայց յանկարծ սկսեց սառնութեամբ վերաբերվել դէպի Ներսէսի նուիրակը, որ բերում էր նրան շատ անգամ պատասխաններ պատրիարքի կողմից այն հարցումներին որ Գոշէն առաջարկում էր Ներսէսին։ Երկար զուշակութիւններից յետոյ, յայտնվեց, որ Թիւրքերին աջողվեցաւ բամբասել հայերին և հաւատացնել Գոշէնին որ Թիւրքաց հայերը մեծ համակրութիւն ունենալով դէպի Ռուսաստանը, աշխատում են Թիւրքաց Հայաստանում Ռուսաստանին նպաստող շարժումն անել։ Թիւրքերը հաղորդեցին Գոշէնին, որ իբր թէ այդ շարժումը, պատրաստված լինելով ռուս կառավարութեան ագէնտներով, սպառնում է թէ անգլիական միսիօնարների գործի աջողութեանը և թէ վերջապէս Անգլիայի ներգործութեանը Հայաստանում։ Ներսէս պատրիարքը անմիջապէս գնաց Գոշէնի մօտ և բացարձակ յայտնեց նրան, որ եթէ Թիւրքաց հայերի կողմից կայ մի առանձին համակրութիւն դէպի Ռուսաստանը, այդ երևոյթը բոլորովին չը պէտք է զարմացնի անգլիական դեսպանին, որովհետև Ռուսաստանի սահմաններում բնակվում է հայերի նշանաւոր մասը, որոնք վայելում են այնտեղ միւս հպատակների հետ քաղաքական և հասարակական հաւասար իրաւունքներ, վայելում են և նիւթական ապահովութիւն, որի շնորհով Փոքր-Ասիայի գրեթէ ամբողջ ազգաբնակութիւնը, որի թւում և 3,000,000 հայերը, նորերումս ազատվեցաւ սովամահ լինելուց։ Ուրեմն Թիւրքաց հայերի համակրութիւնը դէպի Ռուսաստանը մի շատ բնական զգացմունք է, որ այնու ամենայնիւ երբէք խախտելու չէ Թիւրքաց հայերի այն հաստատ յոյսը, որ նրանք ունեն դէպի մարդասէր Անգլիան, որի ջանքերից և տոկունութիւնից նրանք սպասում են մօտիկ ապագայում Թիւրքաց Հայաստանի մէջ բէֆորմների իրագործելուն։

Որպէս զի աւելի նշանակութիւն տայ իր անձնական ազդեցութեան ոյժին արևելքի գործերի ընթացքի վրա, Գոշէն մի տեսակ կեղծ միամտութեամբ հարցրեց պատրիարքին։ «Ուրեմն ձեր սրբազնութիւնը կարծում էք, որ հայոց ազգը ամեն միջոցներով կամենում է ստանալ առանձնական բէֆորմներ Հայաստանում։» —«Այդ մասին դուք ինձանից ոչ պակաս պէտք է տեղեակ լինէք, պատասխանեց Ներսէս, որովհետև, որքան ինձ յայտնի է, այն բէֆորմները, որոնք մշակված են և յանձնված են ձեզ իմ ազնիւ բարեկամ լորդ Գրէնվիլի ձեռքով, վաղուց է արդէն գտնվում են ձեր թղթերի մէջ։»

Առհասարակ, վերջին ժամանակները Թիւրքաց վարչութիւնը մեծ հոգս է տանում, որպէս զի ամեն միջոցներով արգելի Ռուսաստանի հայերին որ և է ներգործութիւն ունենալու իրանց Թիւրքիացի ցեղակիցների վրա։ Այս օրերս մի հայ երիտասարդ կալանաւորվեցաւ, այն պատճառով, որ նրա գրպանից երևեցաւ Թիֆլիսի «Մշակ» լրագրի մի համարի ծայրը։ Կալանաւորվածին երկար հարց ու փորձ անելուց յետոյ, յայտնվեցաւ որ դա այն լրագրի մի հին համար էր, որ ընկած էր երիտասարդի ձեռքը երբ որ այդ լրագիրը դեռ ևս արգելված չէր Թիւրքիայում։ Բայց նոյն իսկ այդ պատուելի լրագրի խմբագրութիւնն էր, որ չորս ամսվայ ընթացքում կարողացաւ ուղարկել յօգուտ սուլթանի սովատանջ հպատակների աւելի քան 32,000 րուբլ։ Այդ փողերը յանձնվեցան Փոքր-Ասիայի սովատանջներին օգնող, Կ. Պօլսի մէջ հիմնված կենտրոնական մասնաժողովին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՕԼԻՍ, 18 յուլիսի։ Այսօր անգլիական դեսպան պ. Գոշէն տեսութիւն ունեցաւ սուլթանի հետ հիւպատոսական և յունական սահմանների հարցերի պատճառով։ Սուլթանը պատասխանեց Գոշէնին, որ նա, իբրև սահմանադրական թագաւոր այդ հարցերի վճռելը պէտք է յանձնէ Բ. Դրանը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յուլիսի։ Այսօր երեկոյեան Վարշավայի երկաթուղով հասաւ Ս. Պետերբուրգ չինական դեսպան Ցզինգ։

ԲԵՐԼԻՆ, 18 յուլիսի։ Այստեղ հասաւ եպիսկոպոսական դեսպան Սանդրիվարվ։

ԲԱԴԵՆ, 18 յուլիսի։ Իշխան Գորչակով ուղևորվեցաւ Վիլցբադ։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԲՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊՐԻԿԱԶԸ ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅԻ ԹՈՅԼՏՒՈՒԹԵԱՆ հիման վրա իր ներկայութեամբ ներկայ յուլիսի 26-ին ԱՃՈՒՐԴ նշանակեց, երեք օրից յետոյ ԿՐԿՆԱՃՈՒՐԴՈՎ ներկայ տարում սպիտակեղէն և իրեր պատրաստելու Թիֆլիսի քաղաքային հիւանդանոցի աղքատանոցի և երակահատների (Ֆելդշերների) ուսումնարանի համար, հետևեալը: Ա. հիւանդանոցի համար 300 տղամարդկերանց շապիկներ քաթանից, 103 կտաւից, 300 փոխաններ քաթանից և 103 կտաւից, 100 շապիկ կանանց քաթանից, 125 կտաւից, 76 կօֆտա Ֆլամեան կտաւից, 400 երեսսրբիչ կտաւից, զուլբաներ կանանց 500, զոգնոցներ բավենդուկից 103, իւպկաներ 68, յատակ սրբելու բավենդուկ 1,733 արշին, գլխարկներ քաթանից 18 վերշկանոց լայնութեան 150, բարձի երեսներ Ֆլամեան կտաւից 400, կօվասներ արտօնութիւն ունեցող 7 կանանց համար սպիտակ պիկէից 14, սպիտակ պիկէից իւպկաներ 10, բայկի 15 լէհերներ արտօնութիւն ունեցող 15 կանանց համար, պիկէի լէհերներ 15, սպիտակ պիկէի խալատներ 15, բամբակի չուլքիներ 30, տուֆլիներ 400, 2 խոհարարներին հագուստ բավենդուկից 6, նրանց գլխարկներ Ֆլամեան կտաւից 9, նահալու վերևի և ներքևի երեսներ պարուսինին 325 զոյգ, փայտի աթոռներ 60, ժեշտի չը ներկված վեդրներ 30: Բ) Աղքատանոցի համար. Տղամարդկերանց շապիկներ քաթանից մի արշին լայնութեան 30, փոխաններ անգլիական պարուսինայից 40, մահուդի դղակներ 30, կանանց շապիկներ քաթանից մի արշին լայնութեան 50, շորեր քաթանից 20, բրդէ զուլպաներ 100, բամբակէ 100, կօշիկներ 100,, զոգնոցներ բավենդուկից 24, սպիտակ սփռոցներ քաթանից 2 արշին լայնութեան 6, սալֆէտներ մի արշին լայնութեան 100, ուղղի մահուդից վերարկուներ 20, ժեստի վեդրներ չը ներկված 4, կաթսաներ 1 պուդ 10 ֆունտ քաշով զանազան մեծութեան, 10 պահարաններ, 40 սեղաններից պահարաններ շինել և գ.) երակահատների ուսումնարանի համար շապիկներ կտաւից 50, փոխաններ կտաւից 110, ոտքի փսխաթոցներ կտաւից 90, թաշկինակներ 80, մելիտօնից բլուզաններ 54, վարտիքներ մելիտօնից 67, պալտօներ մելիտօնից 13, բլուզաններ և պալտօներ անգլիական պարուսինայից 65, գլխարկներ 38, զուլբաներ 90, բալշի երեսներ 270, ամբողջ կապալը 6,375 ր., 81½ կ.:

Աճուրդը կը կատարվի բերանացի և փակված ծրարներով, օրէնքների հիման վրա, իւրաքանչիւր առարկան առանձին, աճուրդը վերջացնելուց յետոյ յայտնութիւններ չեն ընդունվում: Բերանացի և փակված ծրարներով աճուրդին մասնակցող անձանց յայտարարութիւնները կընդունվեն միայն աճուրդի և կրկնաճուրդի օրը 12 ժամից ոչ ուշ Պրիկազի ներկայութեամբ. փոստով ուղարկված յայտարարութիւններ կընդունվեն և աճուրդի ժամանակ: Յայտարարութեան հետ պէտք է լինի գիւղական վկայական և յուսալի գրաւ կապալի 1/3 գումարի: Սկզբնական փողերը ստանալու համար հարկաւոր է գրաւ. զանազան հիմնարկութիւնների տոմսակներով:

Աճուրդ կատարելու պայմանները կարելի է տեսնել ամենայն օր Պրիկազի կանցելեարեայում առաւօտեան 10—2 ժամը:

1—3

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Հրացաններ, բեվօլվերներ, դանակներ, գրիչներ, անուշահոտութիւններ, սապոն, գուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

20—20

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Մինչև այս ԱՄՍՎԱՑ ՎԵՐՋԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ Արծրունու գալերէի մէջ: Գուլպաներ (տղամարդկերանց և կանանց), թաշկինակներ, պարուսինա, պատկերներ, հոտաւէտ ջրեր, հրացաններ, բեվօլվերներ, կողպէքներ, սղոցներ, դանակներ, զդալներ, ցիտրաս-մաղնեզիա ծարաւից և այլն. այժմ ծախվում են 25%—50% էժան քան թէ ուրիշ տեղ:

8—10

Համեմատեցէք անգլիական խանութի թէյն գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի ֆունտը 2 բուբլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

36—100

Նուռով մամուլի տակից դուրս կուգան Ս. Մանդինեանի հեռևեալ աշխատութիւնները.

Ազգային ընտանեկան աշխարհք. 1-ն տարուայ ուսմունք, և ընթերցմունք, առաջին տպագրութեամբ:

Ազգային դիցազնական աշխարհք. 2-դ տարուայ ուսմունք և ընթերցմունք, առաջին տպագրութեամբ:

Նահապետական աշխարհք և հայրենիք. 3-դ տարուայ ուսմունք և ընթերցմունք, երկրորդ տպագրութեամբ:

4—5

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօտիներանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրով վիներական և բողազի հ., Ռեյֆ աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադօվ, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Ռուդվօվսկի ներքին հ., Շտէյմբօրսկի կիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բողազի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադօվ և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստվածատուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առտնաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ ՀՐԱՏԱՐԱԿ ՈՒՄԵՆԱՄԲ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ ԵՎ ԾԱԽՎՈՒՄ Է ԲԱՑԱՌԱՊԷՍ ՆՈՅՆ ՏԵՂԸ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԷՈՆԵԱՆՑԻ:

Ա. ՏԱՐԻ նախագիտելիք (իբրև հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիզի հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ.

գումարով առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը քաղաքական:

10—20

Աղէքսանդրապօլու երկսեռ դպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ռուսաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:

Յանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձուք { Սարգիս Միրզայեանց. Աստուր Խաչակեանց.

ԱՌԻԵՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՈՎ, ԵՒ ԸՆԿ. յայտնում է այդ առևտրական տան գործերով բոլոր հետաքրքրվածներին, որ գործերի ընդարձակվելու պատճառով այդ տան գլխաւոր դրասենեակը օգոստոսի 1-ից կը տեղափոխվի Դժակելի տան վերին յարկը Գանօվսկայա փողոցի և Երիվանսկայա հրապարակի անկիւնի վրա: Տուրքերի տալու և մուտքերի ստանալու համար դրասենեակը հասարակ օրերում բաց է լինում առաւօտեան 9 ժամից մինչև 2, իսկ կիրակի օրը 8—10 ժամ: Գնում է 1 և 2 փոխառութեան տոմսակներ և ծախում է նրանց այն պայմանով, որ գինը 12 ամիսների ընթացքում հատուցանվի: Այդ պայմաններով մի տոմսակ գնողը տարվայ ընթացքում մասն ունի տարածից այն 20 համարների, որոնք ցոյց են տրված վիպականի մէջ չորս տիրաժների: Ցանձնարարութեամբ գնում է և ծախում է մասնաւոր անձանց ամեն տեսակ անշարժ կայքեր, կօմիսիայով ծախում է ապրանքներ և նիւթեր: Ծախում է տպված պայմանագիրներ, բնակարաններ, խանութներ և դատարկ տեղեր քրէհով տալու համար: Տուրքերին մինչև նոր կարգադրութիւնը փնտրում է.

1) Պահելու համար մինչև պահանջելը 4½%, պայմանաւոր 5½%, 2) տուրքերին 6 ամսով 5½%, 9 ամսով 6½%, 1 տարով 7½% 1½ տարով 8%½, 2 տարով և աւելի 9: 3) Այդ ընկերութեան 1 կարգի պայ ունեցողների մասնաւոր պայմանաւոր տուրքերին 9%: Պարտամուրհակով յայտնի անձի ապահովութեամբ փող տալու ժամանակ առնում է մի ամիս ժամանակով 10%, մի շաբաթ ժամանակով 9%:

Աւելի մանրամասն տեղեկութիւններ ցանկացողները կարող են ստանալ ամեն օր դրասենեակի կառավարչից:

5—10 (2)

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухнею, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.

ՄԻՆԱՍ ԳԻՒԼԶԱՏԵԱՆ, որ կանտորայ ունի ՓԱՐԻԶ քաղաքում, ընդունում է ամեն տեսակ ԱՌԻԵՏՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ կամ սիսիոնով կատարելու անյապաղ, ամենայն ճշտութեամբ, և դիմում է պ. պ. վաճառականներին, առաջարկելով իր ծառայութիւնը:

1—5

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐՋԱՅՐԱՆ, հայոց ծխական և մասնաւոր ուսումնարաններում 8 ՏԱՐԻ դասախօսութիւն տրած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ սեպտեմբերի 1-ից ցանկանում է ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՕՆ ստանալ բացառապէս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒՐՔԱՆՈՒԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և գաւառներում: Տեղեկանալ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ կամ ԷՆԳԻԱՆՋԵԱՆՑԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ:

2—22

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱՑԻՆ կից կը բացվին ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԷ, ՇՕԿՕԼԱԴ, ԹԷՅ և պատրաստված հանքային զանազան ԲԶԻԵ:

26—40

Дозволено Цензурою 21 Іюля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона